

Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ,  
Արցախի Հանրապետության մեծարգո Նախագահ,  
Ձերդ Սրբություն, Ամենայն Հայոց Կաթողիկոս,  
Ձերդ Սրբություն, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,  
Վերապատվելի,

Գերաշնորհ, հոգեշնորհ հոգևոր հայրեր, ձերդ գերազանցություն դեսպաններ  
համահայկական կառույցների, հայկական կազմակերպությունների  
ղեկավարներ և ներկայացուցիչներ,  
Տիկնայք և պարոնայք, սիրելի հայրենակիցներ,

Սիրով և ջերմորեն ողջունում եմ ձեզ Մայր Հայրենիքում և ասում բարով եք եկել  
ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետություն:

Շնորհակալ եմ, որ ընդունեցիք մեր հրավերը, չինայեցիք ձեր ժամանակն ու  
նյութական միջոցները, եկաք իրականություն դարձնելու համահայկական այս  
ամենամեծ հարթակի աշխատանքները:

Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովից անցել է ուղիղ 3 տարի:

Անցած համաժողովի ընթացքում հնչած առաջարկները, դիտողությունները  
համակարգվել, դասդասվել են, լրացվել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի  
համահայկական հոչակագրի դրույթներին համապատասխան և դարձել Հայաստան-  
Սփյուռք գործակցության անցած տարիների ուղենիշ:

Սփյուռքի նախարարությունը, հիմք ընդունելով այդ հարցադրումները,  
գործակցելով հոգևոր, համահայկական, համայնքային կառույցների, այլ  
նախարարությունների հետ, մշակել և իրականացրել է բազմաբովանդակ ձեռնարկներ,  
ծրագրեր, որոնց ամփոփ արդյունքները գրքույկի տեսքով ներկայացված է ձեզ:

Աշխատանքները հիմնականում նպատակաուղղվել են՝ ամրացնելու Սփյուռքի  
կապը Հայրենիքի հետ, աշխուժացնելու երիտասարդության շրջանում  
հայապահպանության աշխատանքները:

Մեր միասնության առհավատյան է նաև այս համաժողովը, այս հայաշունչ սրահը,  
որին մասնակցում են մեր ժողովրդի ավելի քան 1800 զավակ 71 երկրից:

Ուրախալի է, որ մասնակիցների 35 տոկոսից ավելին կանայք են, մոտ 20 տոկոսը  
կազմում են երիտասարդները:

Մեծ թիվ են կազմում գործարարները, մտավորականները, 90-ից ավելի  
խմբագիրներ, լրագրողներ են մասնակցում համաժողովին:

Համաժողովին մասնակիցում են հարյուրավոր համահայկական կառույցների  
ղեկավարներ, համայնքային կազմակերպությունների նախագահներ, ատենապետեր:

Ջերմորեն ողջունում եմ նաև հայ եկեղեցու ներկայացուցիչներին, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններին, միջազգային կառույցների ներկայացուցիչներին:

Մեծ պատվիրակություններ են ժամանել Ռուսաստանից (259), ԱՄՆ-ից (213), Արգենտինայից (35), Կանադայից, Ֆրանսիայից (92), Լիբանանից (107), Սիրիայից (44), Իրանից (56), Թուրքիայից, Վրաստանից:

Համաժողովին մասնակցում են տարբեր երկրների պառլամենտների հայազգի պատգամավորներ, նախարարներ, տեղական մարմիններում ընտրվածներ:

Առաջին անգամ համաժողովին մասնակցում են Մալայզիայի, Թայլանդի, Սինգապուրի, Ճապոնիայի, Մեքսիկայի, Եթովպիայի, Սուդանի, Սյամարի համայնքների ներկայացուցիչներ:

Համաժողովի օրակարգը խիստ հագեցած է, այն ներառում է Հայրենիքի անվտանգության և պաշտպանության, արտաքին քաղաքականության, տնտեսության զարգացման և հայապահպանության հիմնախնդիրները:

Որքանով համաժողովը կլինի կազմակերպված, գործնական և արդյունավետ՝ կախված է այստեղ ներկա գտնվող յուրաքանչյուրից:

Համզոված եմ, որ ձեր գործնական դիրքորոշումներով, իրատեսական հարցադրումներով, նոր նախագծերով, գաղափարներով կհարստացնեք Հայաստան-Սփյուռք գործակցությունը և կնպաստեք նրա հետագա զարգացմանը:

Մաղթում եմ համաժողովում հետաքրքիր քննարկումներ, կառուցողական երկխոսություն և բարի երթ:

ՀՀ սփյուռքի նախարար  
**Հրանուշ Հակոբյան**